Հաստատում եմ՝----------

Տնօրեն՝

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

«ՀԱՐԺԻՍԻ ՀԱՄԼԵՏ ՄԻՆԱՍՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ

Դասղեկի աշխատանքային տարեկան ծրագիր

8-րդ դասարան

Դասղեկ՝ Սոնյա Բագրատի Հովակիմյան

2023-2024 ուստարի

Տեղեկություններ աշակերտների մասին

Աշակերտի ազգանուն, անուն, հայրանուն	Դպրոց ընդունման տարեթիվը	Աշակերտական շարժի համարը	Ծննդյան ամիս, ամսաթիվ,	Սեռը
1.Արիստակեսյան Էլինա Մանվելի	1.09.2016թ.	N1711	06.11.2010թ.	իգական
2.Զիլֆուղարյան Մարի Մայիսի	1.09.2016թ.	N1714	09.11.2010թ.	իգական
3.Թովմասյան Նարե Հրանտիկի	1.09.2016թ.	N1715	06.26.2010թ	իգական
4.Հակոբյան Անի Միհերի	1.09.2016թ.	N1716	10.12.2010թ.	իգական
5.Հարությունյան Պայծառ Արթուրի	1.09.2016թ.	N1717	01.05.2010թ.	իգական
6. Վլադիմիրյան Մաքսիմ Կարենի	1.09.2016թ.	N1718	04.16.2010թ.	արական

N	Անուն ազգանուն	Հասցե	Հեռախոսի համար	Ծնողի(խնամակալի) աշխատանքի վայրը կամ զբաղմունքը	Ընտանիքի սոցիալական վիճակը
1.	Էլինա Արիստակեսյան	Գյուղ Հարժիս	094779863	մեխանիզատոր	բավարար
2.	Մարի Զիլֆուղարյան	Գյուղ Հարժիս	098510761	մեխանիզատոր	բավարար
3.	Նարե Թովմասյան	Գյուղ Հարժիս	093710869	մենատնտես	բավարար
4.	Անի Հակոբյան	Գյուղ Հարժիս	098136869	մենատնտես	բավարար
5.	Պայծառ Հարությունյան	Գյուղ Հարժիս	098933953	մենատնտես	բավարար
6.	Մաքսիմ Վլադիմիրյան	Գյուղ Հարժիս	094002677	ուսուցչուհի	բավարար

Կրթադաստիրակաչական աշխատանքների հիմնական ուղղությունները

1. **Դասարանի աշակերտների ընդհանուր բնութագիր**

Դասարանը բաղկացած է 6 աշակերտից՝ 1 տղա և 5 աղջիկ: Դասընկերները համերաշխ են, միմյանց հանդեպ ուշադիր են, հարգալից, ընկերական ու անմիջական:

Վլադիմիրյան Մաքսիմը խելացի է, բայց քիչ է աշխատում: Նա սիրում է նկարել, գեղեցիկը տեսնելու յուրահատուկ ձիրք ունի, գեղեցիկ նախադասություններ է կազմում, ձեռագիրը համաչափ չէ, ունի հստակ խոսք: Ժպտերես է, ուշադիր, երազկոտ, երբեմն մոռացկոտ: Նա ազատ է շփման մեջ, ինչը խոսում է նրա ազնվության մասին: Դասղեկի հետ շփվելիս չի կաշկանդվում, ազատ արտահայտում է մտքերը, զգացմունքները:

Դասընկերուհիները չափից դուրս ուշադրություն են հատկացնում նրան, երբեմն փորձում են վերահսկել նրա վարքը:

Արիստակեսյան Էլինան խելացի է, աշխատասեր ու պարտաճանաչ: Սիրում է առաջինը լինել, ունի գեղեցիկ ու համաչափ ձեռագիր, խոսքը կազմակերպված է, հստակ ու գեղեցիկ: Նեղացկոտ է, բարի և հետաքրքրասեր: Գաղտնապահ է, չի կիսվում զգացմունքներով, անընդհանտ անհանգստանում է, թե այս կամ այն միջոցառումը, աշխատանքը, ինչպես կավարտի:

Զիլֆուղարյան Մարին կազմակերպված, պարտաճանաչ աշակերտուհի է:Նա աշխատասեր է, սիրում է, երբ լսում են իրեն և կատարում են հանձնարարությունները: Ընկերասեր է, ուշադիր բոլորի և ամեն ինչի նկատմամբ: Մարին հոգատար է և անկեղծ, ձգտում է բարձրաձայնել առկա խնդիրները:

Թովմասյան Նարեն աշխատասեր, ավելիին ձգտող, համարձակ աշակերտուհի է: Սիրում է լինել ուշադրության կենտրոնում, բայց երբեմն ինքն է անուշադիր: Նեղացկոտ է, զգացմունքային, փութկոտ: Երբեմն զգացմունքները խանգարում են Նարեին շփման մեջ:

Հակոբյան Անին ստեղծագործող, վերլուծող, պարտաճանաչ ու աշխատասեր աշակերտուհի է: Սիրում է սովորել, բանաստեղծություններ գրել: Նա համեստ է, խելացի և ընկերասեր: Անին սիրում է, երբ ամեն ինչ պարզ է ու հասկանալի, բայց հաճախ հենց ինքն է ինչ-որ բան թաքցնում:

Հարությունյան Պայծառը միջին ընդունակություններով, լռակյաց ու համեստ աշակերտուհի է: Ուզում է լավ սովորել, բայց միայն ուզում է: Խոսքը հաճախ ցաքուցրիվ է, անհարթ: Նա զգացմունքային է, բարի ու ընկերասեր: Դժվար է բացատրում իր հետ կատարվող որևէ երևույթ: Երբեմն խուսափում է ընկերական հավաքներից և էքսկուրիսիաներից:

Դասընկերները համերաշխ են, ընկերասեր ու հոգատար:

Դասարանում ունենք 1 գերազանց և 4 հարվածային առաջադիմությամբ աշակերտներ: Բոլորը հարգում են միմյանց, նրանք կարողանում են տարբերել մարդկային բարձր հատկանիշները և այդ որակների կրող են լինելու:

2.Ուսումնադաստիարակչական նախատեսվող աշխատանքները ուստարվա ընթացքում

Ամենօրյա աշախատանքում ներառել հերթապահության և կարգապահության ստուգումը, հարցում աշակերտների առողջական վիճակի, ինքնազգացողության մասին, ամենշաբաթյա դասղեկական ժամերի անցկացում, խորհրդակցում աշակերտների հետ դասարանում առկա խնդիրների մասին: Ամենամսյա աշխատանքում կազմել սովորողների առաջադիմության և բացակայության գրաֆիկ: Կազմակերպել էքսկուրսիաներ դեպի մոտակա թանգարաններ, մասնակցել կազմակերպվող շաբաթօրյակներին, պարապմունքներ ունենալ բնության գրկում, մասնակցել դպրոցական միջոցառումներին: Կատարել դասղեկական դասալսումներ, կազմակերպել ծնողական ժողովներ, զրույց ունենալ ծնողկոմիտեի անդամների հետ: Աշակերտների հետ կազմակերպել միջոցառումներ, ձևավորել պատի թերթեր, վարել զեկույցներ, նպաստել դպրոցական կյանքի զարգացմանն ու աշխուժացմանը:

3.Հայեցի դաստիարակություն

ա/ Հոգևոր դաստիարակություն

Հոգևոր սնունդը շատ կարևոր է մարդու զարգացման, ձևավորման և աշխարհայացքի կերտման համար:Աշակերտ-մարդուն դաստիրարակել որպես ազնիվ, արժանապատիվ, մարդասեր, աշախատասեր, հայրենասեր, բնության հետ հաշտ ապրող քաղաքացի: Նպաստել նրա հոգևոր ձգտումների ճիշտ ու գեղեցիկ արտահայտմանը, և, որ, ամենակարևորն է, ուղղորդել նրան որպես նպատակասլաց քաղաքացու կերպար:

բ/Գեղագիտական դաստիարակություն

Գեղեցիկը սիրող մարդն անպայման կսովորի գնահատել այն: Սովորողներին ծանոթացնել մշակութային բարձր ու գեղեցիկ արժեքներին՝ թատրոն, կինո, նկարչություն, ճարտարապետություն, գրականություն, երաժշտություն՝ սերմանելով ճաշակի ձևավորման ճիշտ նախադրյալնել, գեղեցիկի ճշմարիտ ընկալում:

գ/Ռազմահայրենասիրական դաստիարակություն

Հայրենիքը սկսում է սահմանից, բայց չի ավարտվում սահմանին:

Յուրաքանչյուր հայ աշակերտ շատ լավ գիտի այդ մասին:Հայրենիքն ամրանում է թիկունքում՝ հայրենասեր քաղաքացու՝ ուսուցչի, շինարարի, բժշկի, նկարչի, երաժշտի, դերասանի և այլոց նվիրյալ աշխատանքի շնորհիվ: Սովորողներին ծանոթացնելով հայ անվանի ու արժանավոր հերոսներին՝ նպատակ ունենք կերտել ապագա հայրենասեր ու նվիրյալ մասնագետի կերպար:

դ/ Ֆիզիկական դաստիարակաություն

Առողջ մարմինը կարող է ցանկացած փորձության դիմակայել, ուստի առոջ հոգի ձևավորելու համար կարևոր է նաև առողջ մարմին ունենալը: Սովորողը պիտի լավ հասկանա, որ ճիշտ կազմակերպված քունը, զբոսանքը

մաքուր օդում, առողջ սնունդը և ֆիզիկական ակտիվությունը առողջության գրավակնն են:

ե/Աշխատանքային դաստիարակություն

Աշխատանքն է, որ մարդուն արժանի կամ անարժան է դարձնում:Սովորողներն ինքնուրույն պիտի ձգտեն աշխատանքի, ինչ էլ որ լինի: Միջին դպրոցի սովորողներն արդեն քաջ գիտակցում են, որ աշխատանքն է բարիքի աղբյուրը: Նրանք պիտի հարգեն ու սիրեն աշխատանքը՝ հարգելով աշխատավոր մարդուն:

զ/ Բնապահպանական դաստիարակություն

Մայր բնություն գիտակցումն ունենալով՝ բոլորս հարգանք ու սեր պիտի ունենանք բնության հանդեպ: Այդ սերը թույլ կտա բոլորիս ավելի առողջ լինել: Բնությունը, մեր մոլորակն ավելի երկար պահապանելու համար մաքուր պահենք մեր միջավայրը՝ չթունավորենք, մայր հողը, մեր շնչելու օդը, կենսատու ջուրը:

4. Դպրոց- ընտանիք կապը

Մեր ազգի հիմքն ամուր ընտանիքն է, որ սաներ է տալիս դպրոցին: Միշտ պահել դպրոց-ընտանիք կապը, որպեսզի ճիշտ կրթենք մեր աշակերտներին: Ծնողական ժողովները, համատեղ էքսկուրսիաներ, դասալսումները նպաստում են այդ կապի ամրապնդմանը, որն էլ մեր աշակերտներին ճիշտ ուղղորդելու գրավականն է:

Եթե երեխան ընտանիքի հայելին է, ապա աշակերտն էլ դպրոցի արտացոլանքն է: Հասարակությանը պիտանի, կայացած քաղաքացի տալու համար դպրոց-ընտանիք կապը պիտի լինի թափանցիկ ու անկեղծ, որն ուղղված պիտի լինի աշակերտների ուսումնադաստիարակչական գործընթացում առաջացած խնդիրների լուծմանը, նոր ծրագրերի իրականացմանը և այն ամենին, ինչ կզարգացնի աշակերտի

կարողունակությունները՝ նպաստելով դպրոցի, հետագայում հասարակության զարգացմանը:

Աշխատանքներ ծնողկոմիտեի հետ

Ծնողկոմիտեի կազմը

Նախագահ՝ Հարությունյան Սոնիկ

օգնականներ՝ Վլադիմիրյան Նազելի

Ավետիսյան Ժաննա

անդամներ՝ Հարությունյան Սոնիկ

Վլադիմիրյան Նազելի

Ավետիսյան Ժաննա

Վլադիմիրյան Նառա

Մկրտչյան Նառա

Ստոնվերանց Նելլի

Նախատեսվող ծնողական ժողովներ

N	Ամիս	Քննարկվող թեմաներ
1	սեպտեմբեր	Ուսումնական գործընթացի կազմակերպում
2	հոկտեմբեր	Կրթության առաջադիմության գնահատում, ընթացիկ հարցեր

3	նոյեմբեր	Առաջացած խնդիրների քննարկում և լուծում, ընթացիկ հարցեր
4	դեկտեմբեր	Կիսամյակի ամփոփում, բացթողումների բարձրաձայնում, նոր առաջարկությունների քննարկում
5	հունվար	կիսամյակի անելիքներ, բացթողումների շտկում
6	փետրվար	առաջադիմության, վարքի հետ կապված հարցեր
7	մարտ	Ծնող-աշակերտ-դասղեկ հանդիպում-զրույց
8	մայիս	Ուստարվա ամփոփում, առաջադիմության գնահատում, տարեվերջյան էքսկուրսիայի կազմակերպում

Նախատեսվող ծնողական դասալսումներ

Շաբաթական մեկ ծնողի այց դպրոց՝ առաջադիմության, վարքի, դասղեկի և ուսուցիչների հետ զրույց ունենալու և դասալսում կատարելու նպատակով:

Ուսումնադաստիարակչական աշխատանքների բովանդակությունը

1.Ո՞վ եմ ես: Արդյոք ես ճանաչում եմ ինձ:-8.09.2023

2.Ինչպե՞ս եմ կազմակերպում իմ օրը:-15.09.2023

3.Հայրենիք: Նժդեհյան գաղափարներ:-22.09.2023

4.44-օրյա պատերազմը: Մեր պաշտպանները:-29.09.2023

5.Ուսուցիչ:-6.10.2023

6. Աշունը Վահան Տերյանի ստեղծագործություններում:

-13.10.2023

7.Ժամանակ: Ամենաթակը մեր կյանքում:-20.10.2023

8.Գրքերն իմ կյանքում:-3.11.2023

9.Վնասակար սովորություններ. ինչպե՞ս հեռու մնալ:

- 10.11.2023

10.Գույներն իմ կյանքում: -17.11.2023

11.Շնորհակալ լինել:- 24.11.2023

12.Ի՞նչ է ՄԻԱՎ, ՁԻԱՀ-ը: -1.12.2023

13.Կարողանալ ներողություն խնդրել: Ներել սրտով:

- 8.12.2023

14.Առողջ հոգի առողջ մարմնում և հակառակը: -15.12.2023

15.Երազանքի թևերով: Սպասելով ամանորյա հրաշքին:

-22.122023

16.Իմ ձմեռային հեքիաթը:-12.01.2024

17.Երաժշտությունն իմ կյանքում:-19.01.2024

18.Հայոց բանակը և հայ զինվորը:-26.01.2024

19.Իմ գյուղը:-2.02.2024

20.Սպորտն իմ կյանքում:-9.02.2023

21. Հազարամյա հայ գիրը:-16.02.2024

22.Սիրենք մեր մայրենին:-23.02.204

23.Արտակարգ իրավիճակներ: Ինչպե՞ս վարվել: -1.03.2024

24.Այսօրը Չարենցի հետ:-15.03.2024

25.Գարուն: Ձնծաղկի բույրը:-22.03.2024

26.Քառօրյա պատերազմ:-5.04.2024

27.Շնորհավոր տոնդ, մայրի՛կ:-12.04.2024

28. Փոքրիկ իշխանի 25 կանոնները:-19.04.2024

29.Եղեռն: Հայ վրիժառուներ:-26.04.204

30.Մեր վախերը: Ինչպե՞ս հաղթահարել:-3.05.2024

31.Մեր Արցախը:-10.05.2024

32.Աշխատանքը ոսկի է:- 17.05.2024

33.Եվ ահա ավարտվեց ուսումնական տարին:-24.05.2024